Ավետիք Իսահակյան

Ընկերներըս վաղ են մեռել

Ընկերներըս վաղ են մեռել,
Սիրող սրտերն հող են դառել.
Չոր ծառի պես ես եմ կեցել,
Ընկերներըս հող են դառել;

Անգին մայրըս, ա՜խ մեջքը կոր,
Անկուշտ հողին աչքն է գըցել,
Ագիզ մորըս կյանքն է հատել.
Չոր ծառի պես ի՞նչ եմ կեցել:

Ծառըս ծաղկած անբեր մընաց,
Ծիլ ու ճյուղըս գարնան չորցան,
Դարդի որդն էլսիրտս է կրծել,
Չոր ծառի պես ի՞նչ եմ կեցել:

Մի՛ վրոազիր, է՜յ մաշված սիրտ,
Աշնան քամին հիմի կըգա.
Ծառդ արմատով կառնի – կերթա,
Աշնան քամին հիմի կըգա …

1899
Բաքու